

## Ձեռնարկությունների Եվրոպական Ցանց Հայաստան



# ՏԵՂԵԿԱԹԵՐԹ #5

Մայիս 2017

Երևան, Հայաստան



# Բովանդակություն

Գործարար համագործակցության առաջարկներ և հարցումներ.....	3
Սննդի վերամշակում .....	3
Տեքստիլ արտադրություն .....	5
Շինարարություն .....	8
R&D .....	11
Տեղեկատվական տեխնոլոգիաներ.....	12
Կոսմետիկա.....	13
Դեղագործություն .....	15
Այլ ոլորտներ .....	16
Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ և առաջարկներ.	19
Եվրոպական նորություններ և միջոցառումներ.....	21

# Գործարար համագործակցության առաջարկներ և հարցումներ

Հայաստանյան ՓՄՁ-երի միջազգային գործարարության զարգացման և արտասահմանյան գործընկերների հետ կապեր հաստատելու նպատակով ՁԵՑ Հայաստանը ուշադրության է ներկայացնում գործարար համագործակցության հետևյալ առաջարկները.

## Մենդի վերամշակում



## Գործարար համագործակցության առաջարկներ

*Էներգետիկ խմիչքներ արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ և առևտրային գործակալներ ողջ աշխարհում*

Լեհական ընկերությունը, որն արտադրում է էներգետիկ խմիչքներ, փնտրում է գործընկերներ ԵՄ և այլ երկրներում: Ընկերությունն արտադրում է իր ապրանքները 2012 թվականից: Ընկերությունը ցանկանում է համագործակցել մեծ թվով դիստրիբյուտորների և գործակալների հետ: Ընկերությունը կարող է նաև արտադրել պատվերով ապրանքներ հաճախորդի բրենդի ներքո:

***Արտադրողը փնտրում է առևտրային գործընկերներ տարածման ծառայությունների համար  
և առաջարկում է արտադրական հնարավորություններ իբրև ենթակապալառու***

Լեհական միջին չափերի ընկերությունը սննդի ոլորտից, որը մասնագիտացած է այլումինե տարաներով ոչ ալկոհոլային խմիչքների արտադրության ոլորտում, գործում է միջազգային շուկայում 2001 թվականից: Ընկերությունը փնտրում է սննդամթերք ներմուծողներ և/կամ դիստրիբյուտորներ: Ընկերությունը փնտրում է նաև գործընկեր, ով հետաքրքրված է մասնավոր պիտակով խմիչքի արտադրությամբ: Համագործակցությունը հնարավոր է տարածման, արտադրական կամ ենթակապալմանագրային համաձայնագրերի ներքո:

Ծածկագիր. BOPL20160229001

***Բնական հյութեր՝ պատրաստված մրգերից և բանջարեղեններից***

Փոքր լեհական ընտանեկան ընկերությունը, որ մասնագիտացած է մրգերից և բանջարեղեններից բնական հյութերի արտադրության ոլորտում, փնտրում է առևտրի միջնորդավորված ծառայություններ և առաջարկում է արտադրական հնարավորություններ: Ընկերությունը փնտրում է համագործակցություն տարածման կամ արտադրական ծառայությունների ներքո:

Ծածկագիր. BOPL20151023003

***Ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ***

Ընկերությունը Միացյալ Թագավորությունից մշակել է մի շարք թանձրուկներ՝ համատեղելով տոմատի մածուկը և մանանեխը: Ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ Եվրոպայում՝ վաճառելու համար իր ապրանքները մանրածախ և ուտեստների շուկաներում:

Ծածկագիր. BOUK20160408001

**Գործարար համագործակցության հարցումներ**

***Վաճառքի գծով զբաղվող գործակալությունն առաջարկում է ներկայացնել փաթեթավորված  
ապրանքներ***

Գերմանական ՓՄՁ-ն, որը հանդիսանում է փաթեթավորված ապրանքների ոլորտում հարուստ փորձով վաճառքի գծով գործակալություն, լավ տեղեկացված է գերմանական, ավստրիական և բելգիական շուկաներից: Ընկերությունը հետաքրքրված է եվրոպական գործընկերներով, ովքեր հետաքրքրված են առևտրային գործակալության համաձայնագրերով: Բացի վաճառքի խթանումից, ընկերությունը կարող է տրամադրել նաև մարքեթինգային ծառայություններ:

Ծածկագիր. BRDE20160510001

***Ընկերությունը, որը գործում է սննդի ոլորտում, փնտրում է սնունդ և գինիներ արտադրող***

Ֆրանսիական ընկերությունը, որը զբաղվում է վաճառքով և ցանկանում է բազմազան դարձնել իր ապրանքատեսականին, փնտրում է միս, պանիր, ուտեստներ և գինի արտադրողներ: Ընկերությունը փնտրում է տարածման ծառայությունների համաձայնագրեր համաշխարհային մատակարարներին:

Ծածկագիր. BRFR20170418001

***Գործակալությունը փնտրում է արտադրողներ***

Բելգիական ընկերությունը կարևոր դեր է կատարում եվրոպական սննդի շուկայում գործող բիզնեսների համար: Այն հանդիսանում է իբրև միջնորդ և կամուջ ողջ աշխարհի սննդամթերք վերամշակողների և եվրոպացի ներմուծողների համար: Գործակալությունը փնտրում է լավագույն գներով պահածոյացված սննդատեսակները: Երկարատև փորձը նրանց հնարավորություն է տալիս համագործակցել ցանկալի, հուսալի և փորձ ունեցող մատակարարների հետ: Նրանք հետաքրքրված են համագործակցությամբ այն գործընկերների հետ, որոնք գործում են պահածոյացված սննդամթերքի ոլորտում (ձկնեղեն, մրգեր, բանջարեղեններ), միջերկրյա ծովյան արտադրանք, չրեր:

Ծածկագիր. BRBE20160609001

***Ընկերությունը փնտրում է համատեղ ձեռնարկություն***

Մերթական ընկերությունը, որն այժմ զբաղվում է ներմուծմամբ, արտադրությամբ, փաթեթավորմամբ և համեմունքների մատակարարմամբ և հասարակական սննդի սարքավորումների ոլորտում, փնտրում է համատեղ ձեռնարկություն հյուրանոցներին, ռեստորաններին, սրճարաններին մատակարարելու համար նոր համեմունքներ, սննդային լուծումներ և բարելավված/ լավ փաթեթավորում: Այն նոր ընկերություն է և ցանկանում է համագործակցել հուսալի օտարերկրյա գործընկերոջ հետ, ով ունի նորարարական լուծումներ ճաշարանների և հասարակական սննդի նորարարական լուծումների համար:

Ծածկագիր. BRRS20160518001

## Տեքստիլ արտադրություն



## Գործարար համագործակցության առաջարկներ

*Արտադրողը փնտրում է գործակալներ, դիստրիբյուտորներ, մեծածախ վաճառողներ և մանրածախ ցանցեր*

Առաջատար էստոնական ընկերությունը, որն արտադրում է բարձրորակ մանկական տեքստիլ (անկողնային պարագաներ, բարձեր, բամփերներ, ծածկեր, ներքնակներ, անջրանցիկ պաշտպանիչ թերթեր, գլխարկով սրբիչներ), փնտրում է գործակալներ, դիստրիբյուտորներ, մեծածախ վաճառողներ և մանրածախ ցանցեր:

**Ծածկագիր. BOEE20170419001**

*Որոնվում են դիստրիբյուտորներ գլխարկների և բնական կեղծամների համար*

Ընկերությունը Միացյալ Թագավորությունից, որն արտադրում է գլխարկներ և բնական կեղծամներ մազեր չունեցող մարդկանց համար, փնտրում է դիստրիբյուտորներ Եվրոպայի տարածքում, Հյուսիսային Ամերիկայում և Ասիայում՝ վաճառելու համար իր ապրանքները հիվանդանոցներին և կեղծամների սրահներին:

**Ծածկագիր. BOUK20170306001**

*Ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ և գործակալներ*

Ընկերությունը Միացյալ Թագավորությունից, որը ստեղծում է նորաձև օրգանական բամբակե հագուստ նորածինների, երեխաների և մայրերի համար, փնտրում է միջազգային դիստրիբյուտորներ և առևտրային գործակալներ, ովքեր կարող են իրենց արտադրանքը տարածել մանրածախ վաճառակետերում տարածման կամ առևտրային համաձայնագրերի ներքո:

***Բարձրորակ նեղ գործվածք***

Լեհական ՓՄՁ-ն տեքստիլի ոլորտից փնտրում է առևտրի միջնորդավորված ծառայություններ (գործակալներ, դիստրիբյուտորներ): Ընկերությունը տարիների փորձ ունի նեղ գործվածքների՝ ժապավեններ, զարդանախշեր, ռետին, մակաշերտեր և հատուկ տիպեր արդյունաբերական կիրառման համար (օրինակ՝ ավտոմոբիլային, բժշկական) արտադրության ոլորտում: Այն պատրաստ է համագործակցել առևտրային կամ տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո:

Ծածկագիր. BOPL20151222002

***Ընկերությունը փնտրում է գործընկերներ***

Ընկերությունը ստեղծում է նորաձևության և տան համար նախատեսված պարագաներ, և նրա համար թիրախ հանդիսանում է միջին-բարձր սեգմենտը: Բոլոր հավաքածուներն ամբողջովին մշակված են տան համար: Արտադրանքը ենթապայմանագրով է: Ընկերությունը փնտրում է առևտրային համաձայնագրեր առաջակարգ մեծածախ վաճառքով զբաղվող գործակալների/դիստրիբյուտորների հետ աշխարհի ողջ երկրներում: Ընկերությունը ցանկանում է նաև մանրածախ շուկա մուտք գործել տեղական գործընկերների միջոցով, ովքեր ցանկանում են/ պետք է ուսումնասիրեն 1 մլ. բնակչություն ունեցող քաղաքների խանութները: Ընկերությունը նաև առաջարկում է իր դիզայնիչական ծառայությունները 3-րդ կողմի ապրանքանիշերին:

Ծածկագիր. BOPT20170103001

***Լոդափի և Ֆիթնեսի համար նախատեսված հագուստ արտադրողը փնտրում է գործակալներ և դիստրիբյուտորներ***

Բրազիլական ընկերությունը, որն արտադրում է նորաձև, բարձրորակ լոդափի և ֆիթնեսի համար նախատեսված հագուստ և ձեռագործ աքսեսուարներ, փնտրում է երկարատև համագործակցություն, փնտրում է երկարատև համագործակցություն գործակալների և դիստրիբյուտորների հետ, ովքեր զբաղվում են սպորտային զգեստների և լոդազգեստների մանրածախ վաճառքով:

Ծածկագիր. BOBR20160729001

**Գործարար համագործակցության հարցումներ**

### ***Ձեռքի և դաստակի ձեռնոցների մատակարարը փնտրում է կտորեղեն մշակող***

Ընկերությունը Միացյալ Թագավորությունից մասնագիտացած է ջրակայուն, անջրանցիկ և շնչող ձեռքի և դաստակի ձեռնոցների մատակարարման ոլորտում: Դրանք նախագծված են հատուկ սպորտային և բացօդյա հանգստի շուկայի համար, սակայն ընկերությունն ունի նաև պատվիրատուներ, որոնք ունեն առողջական խնդիրներ և գնում են դրանք: Քանի որ դրանք արված են փափուկ նյութից (softshell), ընկերությունը փնտրում է այնպիսի ընկերություններ, որոնք մշակում են սպորտային հագուստի համար նախատեսված տեխնիկական տեքստիլ, որպեսզի արտադրի իր արտադրանքը Եվրոպայում:

**Ծածկագիր. BRUK20170413001**

### ***Ընկերությունը փնտրում է արտադրական գործընկերներ***

Ավստրիական նորաձևության ոլորտում գործող ընկերությունը, որը նախագծում և միջազգային շուկայում վաճառում է իր ձեռագործ նորաձև պայուսակները՝ արված արդյունաբերական պոլիվինիլքլորիդից և բրեզենտի մնացորդներից, փնտրում է Եվրոպական ընկերություն, որն արտադրում է պայուսակներ: Ընկերությունը փնտրում է գործընկեր, ով լավ փորձ ունի պայուսակների և աքսեսուարների արտադրության ոլորտում և կարող է մշակել, վերստին կիրառել պոլիվինիլքլորիդը բարձրորակ պայուսակներ արտադրելու նպատակով: Ընկերությունը փնտրում է արտադրական համաձայնագրեր:

**Ծածկագիր. BRAT20170214001**

## **Շինարարություն**



### **Գործարար համագործակցության առաջարկներ**



***Ռետինե և ռետինե-մետաղական արտադրանք է առաջարկվում կապալառուներին և դիստրիբյուտորներին***

Ռումինական ընկերությունը, որն արտադրում է վուկանացված ռետինե-մետաղական արտադրանք և հակավիբրացիոն ապրանքներ, որոնք կիրառվում են երկաթուղային արդյունաբերության, շինարարական սարքավորումների, հատուկ մեքենաների, քամու տուրբինների, ծովային արդյունաբերության, սովորական ինժեներիայում և այլն, առաջարկում է իր արտադրանքն իբրև ենթակապալառու երկարատև համագործակցության միջոցով:

Իրենց արտադրանքի համար ընկերությունը փնտրում է նաև տարածման ծառայությունների համաձայնագրեր:

**Ծածկագիր. BORO20151103003**

***Ընկերությունը փնտրում է արտադրական համաձայնագրերով հետաքրքրվող գործընկեր***

Լեհական արտադրական և ծառայություններ մատուցող ընկերությունը, որը շուրջ 115 տարվա փորձ ունի, մասնագիտացած է անհատական պատվերով պողպատե կառուցվածքների արտադրության ոլորտում: Այն փնտրում է գործընկերներ, ովքեր հետաքրքրված են արտադրական համաձայնագրերով:

**Ծածկագիր. BOPL20170328001**

***Արտադրողն առաջարկում է իր ծառայություններն աութօրսինգային/ենթապայմանագրային համաձայնագրերի ներքո***

Ռումինական ընկերությունը, որը գտնվում է երկրի արևմտյան մասում, արտադրում է մեխանիկական մշակում և եռակցում անցած մետաղական հավաքվածքներ, ռետինե մասեր և պողպատե հարթակներ մեքենաշինության, հատկապես՝ երկաթգծային արդյունաբերության ոլորտի համար: Ընկերությունը ցանկանում է հաստատել համագործակցություն աութօրսինգային/ենթապայմանագրային համաձայնագրերի ներքո եվրոպական ընկերությունների հետ, ովքեր փնտրում են մեծ պողպատյա եռակցված կառուցվածքներ, մետաղական էլեմենտներ, մետաղական և ռետինե մասեր, որոնք արտադրվում են ճնշումով կաղապարման տեխնոլոգիայի միջոցով (ձուլման նյութը հրումով մոցվում է ֆորմայի մեջ):

**Ծածկագիր. BORO20170310001**

***Ընկերությունը փնտրում է գործակալներ և դիստրիբյուտորներ***

Ընկերությունը Միացյալ Թագավորությունից արտադրում է մի շարք ռեֆլեկտիվ փայլաթիթեղներ, լուծումներ՝ բավարարելու ջերմամեկուսացման ներկայացվող պահանջները գյուղատնտեսական նշանակության շինությունների համար: Ընկերությունը փնտրում է գործակալներ և դիստրիբյուտորներ Եվրոպայում՝ վաճառելու համար իրենց՝

բարձր արդյունավետություն ունեցող մեմբրանները թոչնաբուծարանների և այլ անասնաբուծական շինությունների շուկաներում:

Ծածկագիր. BOUK20160412005

***Շինարարական ընկերությունն առաջարկում է ենթապայմանագրային համագործակցություն***

Ռումինական ընկերությունը, որը գործում է շինարարության ոլորտում, առաջարկում է ենթապայմանագրային համագործակցություն շինարարական աշխատանքներում Եվրոպայում և դրանից դուրս: Ընկերությունը շինարարական աշխատանքներով է զբաղվում և կենտրոնացած է մեկուսացման տեխնոլոգիաներում: Ընկերությունը կարող է առաջարկել նոր պրոֆեսիոնալ շինարարական ծառայություններ իսլամիտ գներով:

Ծածկագիր. BORO20161219001

***Արտադրողն առաջարկում է իր ծառայություններն իբրև ենթակապալառու***

Թուրքական ընկերությունը, որը մասնագիտացած է բարձր ճնշմամբ գլանակաձև արտադրանքի արտադրության ոլորտում՝ նախատեսված մեքենաշինության, սպիտակ ապրանքների, վերականգնվող էներգիայի և շինարարական արդյունաբերության ոլորտների համար, առաջարկում է իր ծառայություններն իբրև ենթակապալառու:

Ծածկագիր. BOTR20161003001

## Գործարար համագործակցության հարցումներ

***Պողպատե դռներ արտադրողը փնտրում է հումք արտադրողներ***

Թուրքական ընկերությունը, որն արտադրում է պողպատե դռներ, փնտրում է մատակարար, ով ի վիճակի կլինի մատակարարել բարձր ստանդարտներով նյութեր: Ընկերությունը փնտրում է արտադրական համաձայնագրեր:

Ծածկագիր. BRTR20151217004

***Գիպս և գիպսե ձեփամածիկներ արտադրողը փնտրում է առևտրային համաձայնագրեր***

Ընկերությունը, որը գտնվում է Պորտուգալիայի կենտրոնական մասում, արտադրում է տրադիցիոն գիպս և գիպսե ձեփամածիկներ: Ընկերության գիպսե ապրանքների շարքը համալրված է շինարարությանն անհրաժեշտ բազմաթիվ ապրանքատեսակներով, լավագույն բնորոշումներն են՝ ջերմամեկուսացումը, մակերեսի հարթությունը, դիմացկունությունը և հեշտ կիրառումը: Ընկերությունը փնտրում է գործակալներ և դիստրիբյուտորներ շինանյութերի ոլորտում հաստատուն փորձով և ազգային ու տարածքային շուկան ընդգրկելու

## R&D



### *EUROSTARS2. Որոնվում է զարգացած չափման ենթակառուցվածքի (AMI) ամբողջական հարթակ*

Կորեական ՓՄՁ-ն, որը մասնագիտացած է չափման ենթակառուցվածքի (AMI) ամբողջական լուծումների մշակմամբ, պատրաստում է ծրագրի առաջարկ EUROSTARS2 ծրագրի ներքո: Գիտահետազոտական ծրագիրը չափման ենթակառուցվածքի հետագա լուծումներին և նախագծմանն է վերաբերում, որոնք հարմար կլինեն տեղական պայմաններին և կարող են հսկել էլեկտրականության գնային վերահսկումը իրական ժամանակում: Որոնվում են ընկերություն կամ ինստիտուտ էլեկտրաէներգիայի համակարգերի մշակման ոլորտից՝ համագործակցության համար:

Ծածկագիր. RDKR20170405001

### *Հրատապ H2020 EE06. Ֆրանսիական ՓՄՁ-ն փնտրում է էներգիայի մատակարարներ կամ տարածման համակարգերի օպերատորներ (DSO)*

Ֆրանսիական ՓՄՁ-ն, որը մասնագիտացած է վարքագծի փոփոխության լուծումներում, փնտրում է էներգիայի մատակարարներ կամ տարածման համակարգերի օպերատորներ՝ ներկայացնելու համար H2020 ծրագիրը, որի նպատակն է մշակել էներգախնայողության ոլորտում սպառողներին ուսուցանելու էֆեկտիվ ծառայություն: Ֆրանսիական ՓՄՁ-ն կհամակարգի կոնսորցիումը:

Ծածկագիր. RDFR20170502001

### *Հրատապ-ՓՄՁ գործիք, 2-րդ փուլ. որոնվում են առողջության և բարեկեցության ծրագրեր*

## ներկայացնողներ

Իսպանական ընկերությունը պատրաստում է առաջարկ՝ ՓՄՁ գործիքի 2-րդ փուլի համար «Առողջություն և բարեկեցություն» թեմայի ներքո: Ծրագրի նպատակն է մշակել և վավերացնել արմատապես նոր խնամքի ծրագիր՝ աջակցելու և մոտիվացնելու համար կարիք ունեցող մարդկանց, առաջնորդելու և խնամելու՝ կախված տարիքով պայմանավորված վիճակից: Ընկերությունը փնտրում է գործընկերներ, որոնք մուտք ունեն առարկաների փորձարկման ոլորտում՝ վավերացնելու և ներկայացնելու համար ապրանքը մեծահասակների լայն զանգվածին և առողջապահության ոլորտի մասնագետներին:

Ծածկագիր. RDES20170511001

## Տեղեկատվական տեխնոլոգիաներ



## Գործարար համագործակցության առաջարկներ

***SS ընկերությունն առաջարկում է իր փորձը ծառայությունների մատուցման կամ աութորսինգային համաձայնագրերի ներքո***

Բուլղարական ընկերությունը, որը տրամադրում է իր ծառայություններն ինտերնետային առևտրի զարգացման և օնլայն բիզնեսի ոլորտում, տրամադրում է վեբ դիզայնի, օնլայն խանութի, տեխնիկական սպասարկման, ապրանքի լուսանկարի խմբագրման, գույքացանկի վերբեռնման, սոցիալական լրատվամիջոցների աճի և մենեջմենթի ծառայություններ: Ընկերությունը ցանկանում է համագործակցել ծառայությունների և/կամ աութորսինգային համաձայնագրերի ներքո:

Ծածկագիր. BOBG20170228001

***Երիտասարդ SS ընկերությունը փնտրում է աութորսինգային կամ ենթապայմանագրային համագործակցություն***

Ռումինական ՓՄՁ-ն մշակում է կոմպլեքս SS ծրագրեր՝ բաղկացած վեբ, բջջային ծրագրերից

և ծառայություններից: Ժամանակակից, վստահ և հավակնոտ ձեռնարկատերերի համար, ովքեր ցանկանում են բարձրացնել կատարողականությունը, ընկերությունը կարող է տրամադրել վերջին՝ ճկուն, հարմարեցված և արդյունավետ լուծումները սմարթ բջջային ծրագրերի միջոցով: Ընկերության հետ համագործակցությամբ կարող են հետաքրքրված լինել բջջային ծրագրերի շուկայում գործող միջազգային ընկերությունները: Համագործակցությունը կարող է լինել աուքտորսինգային կամ ենթապայմանագրային համաձայնագրերի ներքո:

Ծածկագիր. BORO20170130002

***Տնային նոր ավտոմատ լուծում է առաջարկվում ենթապայմանագրային կամ տարածման համաձայնագրերի ներքո***

Ռումինական SS ընկերությունն առաջարկում է եզակի ամենահաս տնային լուծում, որն ապահովված է օգտվողի վարքի ուսուցման ավգորիթմներով և ադապտիվ գործառնություններով, որոնք վերարտադրում են այդ վարքագիծը: Համակարգը սովորում և ստեղծում է այն միջավայրը, որտեղ իրեն ցանկանում է գտնել օգտատերը: Ընկերությունը ցանկանում է դառնալ ենթակապալառու այն գործընկերների համար, ովքեր կցանկանան այս նոր լուծումը համատեղ կիրառել այլ տնային լուծումներում: Միջազգային շուկայում իր արտադրանքի տարածումը ևս հետաքրքրում է ընկերությանը:

Ծածկագիր. BORO20160310002

**Գործարար համագործակցության հարցումներ**

***Որոնվում են տեխնիկական ապրանքներ գիտական գործիքների և բժշկական սարքերի ոլորտի համար***

Ֆրանսիայում գտնվող ինժեներական ՓՄՁ-ն, որը մասնագիտացած է մեխանտրոնիկ և ներդրված համակարգերի լուծումներում՝ առողջապահության և գիտական գործիքների շուկայի ոլորտների համար, փնտրում է նոր տեխնիկական ապրանքներ (մեխանտրոնիկ համակարգ, սենսորներ և ներդրված համակարգեր): Ընկերությունը եվրոպական երկրներում ընդլայնում է իր ծառայությունները 2017 թվականին և առաջարկում է եվրոպական արդյունաբերական ընկերություններին մուտք գործել ֆրանսիական շուկա՝ տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո:

Ծածկագիր. BRFR20170126001

**Կոսմետիկա**



Business Support on Your Doorstep

## Գործարար համագործակցության առաջարկներ

### *Մաշկի խնամքի միջոցներ տարածման համար*

Ֆրանսիական ՓՄՁ-ն, որը մեծ փորձ ունի մաշկի խնամքի կոսմետիկայի և արոմաթերապիայի ոլորտում, մշակել է օգտագործմանը պատրաստ մի շարք մաշկի խնամքի եթերային յուղերից ապրանքներ: Այս եզակի արտադրատեսակները բաղկացած են միային եթերային և բուսական յուղերից՝ առանց քիմիական բաղադրիչների՝ նախատեսված մաշկի բուժման համար: Ընկերությունը փնտրում է գործընկերներ Եվրոպայում և ամբողջ աշխարհում՝ դրանք տարածելու նպատակով:

Ծածկագիր. BOFR20160812001

### *Արտադրողը փնտրում է եվրոպացի դիստրիբյուտորներ*

Բնական և օրգանական կոսմետիկա և մարմնի խնամքի միջոցներ արտադրողը փնտրում է տարածման համաձայնագրեր եվրոպական երկրներում: Կանադական ընկերությունը շուկայում է ավելի քան 20 տարի և արտադրում է մարմնի խնամքի միջոցներ ողջ ընտանիքի համար՝ նախատեսված տարբեր տիպերի մաշկի համար: Արդյունքը շուրջ 150 տարբեր տեսակի հավաստագրված օրգանական մարմնի խնամքի միջոցներն են, որոնք կանոնավոր կերպով ավելանում են:

Ծածկագիր. BOCA20150802006

### *Բուլղարական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ*

Բուլղարական ընկերությունը, որը մասնագիտացած է բիոտեխնոլոգիական հետազոտության և բոլոր տեսակի բնական բուսական միջոցների մշակման և արտադրության ոլորտում, ցանկանում է հաստատել տարածման ծառայությունների համաձայնագրեր՝ վաճառելու համար իր արտադրանքը նոր շուկաներում, ցանկալի է՝ Եվրոպայում, Ասիայում և ԱՄՆ-ում: Արտադրատեսակները, որոնք հիմնված են բուլղարական վարդի յուղի և խխունջի էքստրակտի վրա, պատրաստված են նորարարական տեխնոլոգիաներով և երաշխավորում

## Դեղագործություն



### Գործարար համագործակցության առաջարկներ

#### *Ընկերությունը փնտրում է առևտրային գործակալներ*

Արտադրողը Իտալիայի հյուսիս-արևելքից, առաջարկում է սննդային հավելումներ, օրգանական հումք, բուսական էքստրակտներ՝ առանց գլյուտենի: Ընկերությունը ցանկանում է համագործակցել փորձառու առևտրային գործակալների հետ՝ հիմնելու համար նոր բիզնեսներ և ընդլայնելու համար իր հաճախորդների պորտֆելը: Առևտրային գործակալները պետք է ունենան ցանց դեղագործական ոլորտում:

Ծածկագիր. BOIT20170323002

#### **Բժշկական ցեխ դեղագործական ապրանքներ արտադրողների և մշակողների համար**

Հունգարական ընկերությունը հանդիսանում է Հունգարիայի ջերմային լճի բժշկական ցեխերի դիստրիբյուտոր և մշակող: Այն փնտրում է այդ ցեխի կարիքն ունեցող բժշկական միջոցներ արտադրողների, կամ նոր ընտանեկան ապրանք մշակողների, որոնք ունեն այդ հումքի կարիքը: Ընկերությունը նախ և առաջ առաջարկում է իր մատակարարման ծառայությունները տարածման համաձայնագրերի ներքո, ապա՝ իրենց աջակցությունը հետագա մշակումներին ծառայությունների մատուցման համաձայնագրերի ներքո:

Ծածկագիր. BOHU20160304001

#### *Առողջապահական ընկերությունը փնտրում է եվրոպական դիստրիբյուտորներ առանց դեղի*



---

### *ցավագրկման սարքավորման համար*

Նորարարական ընկերությունը Միացյալ Թագավորությունից արտադրում և վաճառքում է ցավի կառավարման արտադրանք շուրջ 20 տարի: Այժմ ընկերությունը փնտրում է Class IIa pulsed էլեկտրամագնիսական ցավի կառավարման սարքավորման համար դիստրիբյուտորներ Եվրոպայում և ողջ աշխարհում:

Ծածկագիր. BOUK20160407001

---

### **Գործարար համագործակցության հարցումներ**

#### *Արտադրողը փնտրում է գործընկերներ*

Ռուսական ընկերությունը Պերմ քաղաքից, մատակարարում է բժշկական սպասարկման սարքավորումներ (ֆիզիոթերապիայի, վերականգնողական, պրոֆեսիոնալ թերապիաների համար) փնտրում է Եվրոպայում բժշկական սարքավորումներ արտադրողների կոնտակտներ՝ հաստատելու համար տարածման ծառայությունների համաձայնագրեր:

Ծածկագիր. BRGE20170208001

---

## **Այլ ոլորտներ**



### **Գործարար համագործակցության առաջարկներ**

#### *Մեխանիկական մշակման ծառայություններ են առաջարկվում փորձառու լեհական ՓՄՁ-ի կողմից*

Փոքր լեհական ընկերությունը մետաղամշակման ոլորտից, առաջարկում է CNC մշակում, խորը հորատում, հաճախորդի պահանջներով և միջին խմբաքանակներով մասերի արտադրություն, հավքակցում: Այն առաջարկում է իրեն հանդես գալ իբրև ենթակապալառու:

---



արտադրության պիկ ժամանակաշրջանում: Համագործակցությունը հնարավոր է արտադրական, ծառայությունների կամ ենթապայմանագրային համաձայնագրերի ներքո:

**Ծածկագիր. BOPL20151023001**

### ***Ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ***

Թուրքական ընկերությունը LIN (հեղուկ ազոտի), LNG (բնական հեղուկ գազի), LAR (հեղուկ արգոնի), LOX (հեղուկ օքսիգենի) and LIC (հեղուկ ածխաթթու գազի) այլումինե գոլորշիացնող առաջատար արտադրողներից է: Ընկերությունը ցանկանում է հաստատել երկարատև համագործակցություն հուսալի գործընկերների հետ, ովքեր կարող են գովազդել և վաճառել արտադրանքը եվրոպական երկրներում տարածման համաձայնագրերի ներքո:

**Ծածկագիր. BOTR20151231006**

### ***Ընկերությունն առաջարկում է ծառայությունների համաձայնագրեր***

Լեհական ընկերությունը, որը մասնագիտացած է էլեկտրոնային բիզնեսի ոլորտում, ցանկանում է տրամադրել ինտերնետային մարքեթինգի ծառայություններ՝ հիմնված իր գործընկերների բազմակողմանի առաջընթացի վրա ինտերնետային և սոցիալական լրատվամիջոցների ոլորտում՝ կիրառելով մարքեթինգային գործողություններ որոնման համակարգերում: Ընկերությունն առաջարկում է իր ինտերնետային մարքեթինգի ծառայությունները՝ հիմնված ծառայությունների համաձայնագրի վրա:

**Ծածկագիր. BOPL20151213005**

### ***Արտադրողը փնտրում է նոր դիստրիբյուտորներ և առաջարկում է արտադրական հնարավորություններ***

Միջին չափերի լեհական ընկերությունը մասնագիտացած է շարժիչի յուղերի, մեքենաների կոսմետիկի միջոցների և պլաստիկ փաթեթավորման ոլորտում և փնտրում է նոր դիստրիբյուտորներ: Ընկերությունն առաջարկում է փաթեթավորված արտադրություն մասնավոր պիտակով: Ընկերությունը փնտրում է համաձայնագրեր արտադրական կամ տարածման համաձայնագրերի ներքո:

**Ծածկագիր. BOPL20150428001**

## **Գործարար համագործակցության հարցումներ**

### ***Ընկերությունը փնտրում է գործընկերներ***

Իռլանդական վենչուրային ընկերությունը, որը հիմնված է Դուբլինում, աջակցում է սթարթափերին աճել ներդրումների միջոցով, այն առաջարկում է ֆինանսական ծառայությունների համաձայնագրեր համալսարաններին, ինկուբատորներին կամ այլ սթարթափերի համայնքներին՝ գովազդելու համար ներդրումային հնարավորություններն

***Դիտորհիբյուտորը փնտրում է արտադրող***

Իռլանդական ՓՄՁ-ն, որը զբաղվում է կեղտաջրերի մաքրման համար նախատեսված քիմիական միջոցների մարքեթինգով, առաջարկում է իր մարքեթինգային ծառայությունները նման քիմիկատներ արտադրող օտարերկրյա ընկերություններին: Ընկերությունը ցանկանում է ընդլայնել իր արտադրանքի/ծառայությունների պորտֆելը: Այն փնտրում է առևտրային գործակալության կամ տարածման ծառայությունների համաձայնագրեր:

***Ընկերությունը փնտրում է նոր ապրանքատեսակներ ջրի և էներգիայի խնայողության ոլորտում***


Պորտուգալական ՓՄՁ-ն, որը 5 տարվա փորձ ունի տեխնիկական վերլուծության և ջրի, էներգիայի խնայողության լուծումների իրականացման ոլորտում. փնտրում է նոր նորարարական արտադրանք (արևային էներգիայի լուծումներ, օդափոխիչ և այլ նորարարական և արդյունավետ լուծումներ) դրանք իր կողմից առաջարկվող պորտֆելում ավելացնելու նպատակով: Ընկերությունը փնտրում է մասնավոր ընկերություններ հաստատելու համար տարածման ծառայությունների համաձայնագրեր:

***Ընկերությունը փնտրում է պատի էլեկտրական վարդակներ արտադրողներ***

Ընկերությունը Միացյալ Թագավորությունից մշակել է նոր արտադրատեսակներ կանխելու համար հրդեհը էլեկտրական սարքերում:

Ապրանքների ցանկն ընդգրկում է իրենց տեխնոլոգիայով արված պատի վարդակները, և ընկերությունը փնտրում է արտադրողներ, ովքեր կարող են արտադրել Միացյալ Թագավորության և միջազգային վարդակներ արտադրական համաձայնագրերի ներքո:

# Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ և առաջարկներ



Business Support on Your Doorstep

## Տեխնոլոգիական համագործակցության առաջարկներ

### *Հոգնածության (ընկոտության, հոգնածության) և տեսողության պարամետրերի նոր չափման ծրագիր*

Բելգիական ընկերությունն առաջարկում է ծրագիր ֆիզիոլոգիական / ճանաչողական (ուղեղի գործունեություն, աչքի պատկերներ...) վիճակի մոնիթորինգի համար: Այն մշակում է հոգնածության չափումը տեսողական պարամետրերի միջոցով, ինչպես նաև տեսողական պարամետրերի չափումը՝ աչքի պատկերների միջոցով: Ընկերությունը բաց է հետազոտական և լիցենզիոն համաձայնագրերի համար, որպեսզի ինտեգրի այս տեխնոլոգիան սարքավորման մեջ, որն էլ կկարողանա տրամադրել տեսողական կամ աչքի պատկերների պարամետրերը:

Ref : TOBE20160204001

### *Կեղտաջրերի մաքրման շարժական սարքավորում*

Գերմանական բնապահպանական հետազոտությունների կենտրոնը մշակել է շարժական սարքավորում, որն աչքի է ընկնում իր շարժական և ճկուն համակարգով. այն կարող է տեղադրվել և հանվել մի քանի ժամվա ընթացքում: Ավելին, այն գնային առումով ավելի մատչելի է մինչ այդ եղած կոնտեյներներից: Հետազոտական կենտրոնը փնտրում է տեխնիկական աջակցությամբ գործընկերներ արդյունաբերության ոլորտից առևտրային համաձայնագրերի ներքո:

Ref : TODE20170223001

## Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ

### *Թերապևտիկ առումով համապատասխան սպիտակուցներ անհայտ և քիչ հայտնի լիզանդներով*

Անգլիայի արևելքում գտնվող ընկերությունը մշակել է գործիք բարձր ճշգրտությամբ և հուսալիությամբ՝ կանխելու համար լիզանդային կապող մասերը սպիտակուցային թիրախներում: Ընկերությունը փնտրում է արդյունաբերական կամ ակադեմիական թիրախներ, որոնք ունեն բարձր թերապևտիկ համապատասխանություն, որոնց համար հասանելի չեն անհայտ ու քիչ անհայտ լիզանդները: Համագործակցությունը հնարավոր է հետազոտական կամ տեխնիկական համագործակցության միջոցով:

Ref: TRUK20170323001

### *Որոնվում է գործընկեր մշակելու համար ջրային տրանսպորտի ջրանցքի ֆոտոէլեկտրական վահանակների կրող կառուցվածք*

Իսպանական (Կատալոնիա) ընկերությունը, որը մասնագիտացած է ին վիտրո (IVD) ախտորոշման ոլորտում, փնտրում է հետազոտական ինստիտուտներ և ընկերություններ տեխնիկական կամ լիցենզիոն համագործակցության ներքո նոր բիոմարկերների համար, որոնք հայտնաբերվում են իմունոլոգիական հետազոտության միջոցով:

Ref: TRES20170329001

# Եվրոպական նորություններ և միջոցառումներ

Ձեռնարկությունների եվրոպական ցանցի շրջանակներում կազակերպվում են բազմաթիվ միջոցառումներ, որոնք հնարավորություն են ընձեռում գործարարներին հանդիպելու հավանական գործընկերների հետ և ստանալու անհրաժեշտ տեղեկություններ՝ եվրոպական շուկա մուտք գործելու համար:

Ստորև ներկայացվում են 2017 թ. -ի հունիս, հուլիս, օգոստոս, սեպտեմբեր ամիսների ընթացքում կազմակերպվող միջոցառումները:

## Հունիս

05/06/2017	<p><b>Agrofood Brokerage Event at Alimentaria &amp; Horexpo Fair 2017 Lisbon (Portugal)</b></p> <p>Այս տոնավաճառը Պորտուգալիայում ամենամեծ բիզնես հարթակներից է սննդի, խմիչքների, տարածման և հյուրընկալության ոլորտների համար:</p>
08/06/2017	<p><b>Brokerage event Innovat&amp;Match 2017 Bologna (Italy)</b></p> <p><b>Innovat&amp;Match 2017-ի հիմնական ոլորտներն են՝</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Գյուղմթերք</li> <li>• Շինարարություն և կառուցապատում</li> <li>• Մշակութային և ստեղծագործական արդյունաբերություն</li> <li>• Էներգիա և կայուն զարգացում</li> <li>• Առողջություն և առողջապահական արդյունաբերություն</li> <li>• Մեխանտրոնիկա և տրանսպորտ</li> <li>• Արտադրական համակարգի համար նախատեսված ծառայություններ:</li> </ul>
15/06/2017	<p><b>Innovation in Food, Nutrition and Health Brokerage Event Lille (France)</b></p> <p>Այս միջոցառումը եվրոպական առաջատար համաժողովներից է նվիրված սննդի, սննդակարգի և առողջության ոլորտի նորարարություններին:</p>

29/06/2017	<p><b>Torino FashionMatch 2017</b> <b>TURIN (Italy)</b></p> <p>Համագործակցության հաստատման այս միջոցառումն ուղղված է տեքստիլի և նորաձևության ոլորտներին, ուր ընկերությունները, նորաձևության դիզայներները, գործակալները և գնորդները, նաև՝ արտադրողներն ու դիստրիբյուտորները, վերը նշյալ ոլորտների բրենդները կարող են գտնել բիզնես և տեխնոլոգիական գործընկերներ:</p>
------------	--

### Հուլիս

03/07/2017	<p><b>Networking Session at the 7th International Digital Health Conference 2017 in London</b> <b>London (United Kingdom)</b></p> <p>Թվային առողջապահության միջդիսցիպլինար հետազոտության հնարավորությունները մերձեցնում են համակարգչային գիտությունները՝ զգալիորեն բարելավելու համար հասարակական առողջապահությունը, գլոբալ առողջապահությունը և անհատների բարեկեցությունը, որոնք գլոբալ առումով արտահերթ են:</p>
------------	---

### Օգոստոս

22/08/2017	<p><b>gamesmatch@gamescom 2017 - Matchmaking event for the games industry</b> <b>Cologne (Germany)</b></p> <p>Այս միջոցառումը ամենամեծ առևտրային ցուցահանդեսն է և միջոցառումը, որը նվիրված է խաղերի ոլորտին: Խաղեր մշակող ընկերությունները միջոցառման ընթացքում կներկայացնեն իրենց վերջին արտադրանքը և թողարկումները, ինչպես նաև փնտրում են հետագա ծրագրեր ու գործընկերներ:</p>
------------	---

### Մեպտեմբեր

19/09/2017	<p><b>BROKERAGE EVENT - TECHINNOVATION 2017</b> Singapore (Singapore)</p> <p>Այս միջոցառումը տեխնոլոգիա-արդյունաբերություն ոլորտի առաջատար միջոցառումներից է: Այն կազմակերպվում է այնպիսի ընկերությունների համար, որոնք փորձում են գտնել նոր նորարարական և տեխնոլոգիական լուծումներ՝ ուղղված իրենց բիզնեսի կարիքների լուծմանը: Միջոցառումը հնարավորություն է տալիս հաստատել նոր բիզնես կամ տեխնոլոգիական համագործակցություն, կամ համագործակցել՝ մշակելու համար նորարարական ապրանքներ և ծառայություններ:</p>
26/09/2017	<p><b>International matchmaking event at Polagra Food Fair</b> Poznan (Poland)</p> <p>Համագործակցության հաստատման այս միջոցառումն ուղղված է ՓՄՁ-ներին և այլ անհատներ, ովքեր ներկայացնում են սննդի ոլորտը և հետաքրքրված են միջազգային կապերի հաստատմամբ:</p> <p>Ոլորտները հետևյալն են՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• Սննդամթերք և խմիչքներ</li> <li>• Հյուրանոցներ, ռեստորաններ, հասարակական սննդի կետեր</li> <li>• Սննդի մշակման տեխնոլոգիաներ</li> <li>• Փաթեթավորում և լոգիստիկա:</li> </ul>

Վերոհիշյալ միջոցառումների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու համար խնդրում ենք դիմել ՁԵՑ Հայաստան:

**Նշում:** *Եթե Դուք փնտրում եք գործընկեր արտասահմանում կամ նոր շուկա՝ և ցանկություն ունեք ներգրավվել ցանցի տվյալների բազայում, խնդրում ենք դիմել ՁԵՑ Հայաստան՝ համագործակցության հայտաձևեր և այլ համապատասխան տեղեկատվություն ստանալու համար:*

Հարգելի գործարար,

Գրանցվեք հետևյալ հղմամբ՝

<http://een.ec.europa.eu/tools/services/ExpressionOfInterest/Customer/Create?shid=32db25cb-726f-43b0-8b5f-7742d0935799> և ստացեք անվճար

հաղորդագրություններ Ձեր էլեկտրոնային փոստին նոր գրանցված բիզնես ստաջարկների, միջազգային միջոցառումների վերաբերյալ:

***Մատուցվող բոլոր ծառայություններն ու տեղեկատվությունն անվճար են:***